# <<ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 5 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ>> ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-21/07>>

**ք. Հրազդան** «08» ապրիլ 2021թ.

Հրազդանի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Ս. Միքայելյանի,ի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<**ԱՆՆԱՐ** >> **ՍՊԸ- ն, ի դեմս** տնօրեն **Ա.Խաչատրյանի,** որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է << **Հրազդան համայնքի «թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի ջրահեռացման համակարգի կառուցման>> աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **9 959 000 /ինը միլիոն ինը հարյուր հիսունինը հազար / ՀՀ դրամ :**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով Նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

**7.8** Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

**7.9** Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

**7.10** Պայմանագիրը կազմված է  էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

**7.11 Պայմանագրով նախատեսված աշխատանքների մի մասի կատարումն  իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:**

**7.12** Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան

ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1,

վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ

Հ/Հ 900122001663

ՀՎՀՀ 03000453

Համայնքի ղեկավար՝

Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

<<ԱՆՆԱՐ>> ՍՊԸ

ք.Հրազդան Կենտրոն թաղ.

Տիգրան-Մեծի 32

<<Յունիբանկ>> ԲԲԸ Հրազդան մ/ճ

Հ/Հ 24127100346900

ՀՎՀՀ 03017559

<<ԱՆՆԱՐ>> ՍՊԸ տնօրեն՝

Ա. Խաչատրյան

*Հավելված թիվ 1*

*«08» ապրիլ 2021թ. կնքված*

**<<ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-21/07>>** *ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

## << ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 5 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ >>ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի արժեքը /հազ.դրամ/ | Ընդամենը /հազ.դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| N 1 | | | | | |
| 1 | Ասֆալտի շերտի կտրում սղոցով | մ | 70.00 | 0.50 | 35.00 |
| 2 | Ասֆալտի ծածկի քանդում էքսկավատորով՝ բարձելով ինքնաթափերին և տեղափոխում աղբավայր (միջին հեռավորությունը մինչև աղբավայր 6կմ) | 1000մ3 | 0.006 | 5000.00 | 30.00 |
| 3 | Խճային հիմնատակի իրականացում h=11սմ, խճի արժեք, մատակարարում, տեղադրում և տոփանում | մ3 | 5 | 5.00 | 25.00 |
| 6 | Խոշորահատիկ ասֆալտ/բետոնի իրականացում h=5սմ, նյութերի արժեքով, մատակարարումով | 100մ2 | 0.5 | 350.00 | 175.00 |
| 8 | Մանրահատիկ ասֆալտ/բետոնի իրականացում h=3սմ, նյութերի արժեքով, մատակարարումով | 100մ2 | 0.5 | 300.00 | 150.00 |
| 10 | Խրամուղում մշակում III կարգի գրունտներում՝ էքսկավատորով, կողլիցքով | 1000մ3 | 0.127 | 500.00 | 63.50 |
| 11 | Խրամուղու մշակում III կարգի բնահողերում ձեռքով | 100մ3 | 0.07 | 200.00 | 14.00 |
| 12 | Խրամուղու շեպերի և հատակի լրամշակում III կարգի բնահողերում ձեռքով | 100մ3 | 0.04 | 200.00 | 8.00 |
| 13 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում էքսկավատորով կողլիցքով | 1000մ3 | 0.015 | 500.00 | 7.50 |
| 14 | Խրամուղու մշակում IVp կարգի գրունտներում հետահար մուրճով կողլիցքով | 100մ3 | 0.02 | 1000.00 | 20.00 |
| 15 | Խրամուղու մշակում V կարգի գրունտներում էքսկավատորով բարձում ինքնաթափ և հեռացում | 1000մ3 | 0.07 | 1000.00 | 70.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ադբավայր 5.0կմ | | | | |
| 16 | Գրունտի տեղափոխում 5км | տ | 84 | 1.00 | 84.00 |
| 17 | Խրամուղու մշակում V կարգի գրունտներում էքսկավատորով կողլիցքով | 1000մ3 | 0.021 | 600.00 | 12.60 |
| 18 | Խրամուղու մշակում Vp կարգի գրունտներում հետահար մուրճով կողլիցքով | 1000մ3 | 0.008 | 1500.00 | 12.00 |
| 19 | Խողովակի նախապատրաստական շերտի ստեղծում ավազից տոփանումով, h=10սմ | 100մ3 | 0.11 | 200.00 | 22.00 |
| 20 | Խողովակի վրա ավազով պաշտպանիչ շերտի իրականացում՝ ապահովելով խողովակի վերին եզրից 0.20մ բարձրություն, տոփանումով | 100մ3 | 0.41 | 200.00 | 82.00 |
| 21 | Ետլիցք տեղի գրունտով բուլդոզերով, տոփանումով | 1000մ3 | 0.184 | 200.00 | 36.80 |
| 22 | Պոլիէթիլենային ոչ ճնշումային կոյուղու խողովակ՝ ծալքավոր, երկշերտ, լայնուկավոր DN150, արժեք, մատակարարում և մոնտաժ՝ խրամուղում | մ | 68 | 3.00 | 204.00 |
| 24 | Ոչ ճնշումային կոյուղու խողովակ՝ ծալքավոր, երկշերտ, լայնուկավոր DN200, արժեք, մատակարարում և մոնտաժ՝ խրամուղում | մ | 35 | 4.20 | 147.00 |
| 27 | Պոլիէթիլենային, d=110x6,6մմ, 10,0մթն.ճնշ. | մ | 30 | 2.00 | 60.00 |
| 28 | Պողպատե էլեկտրաեռակցվող խողովակ D108x4 հակակոռոզիոն մեկուսացումով, արժեք, մատակարարում և մոնտաժ՝ խրամուղում | մ | 13 | 4.00 | 52.00 |
| 30 | Պողպատե էլեկտրաեռակցվող խողովակ D159x4 հակակոռոզիոն մեկուսացումով, արժեք, մատակարարում և մոնտաժ՝ խրամուղում | մ | 11 | 6.00 | 66.00 |
| 32 | Գոյություն ունեցող դիտահորի պատի մեջ անցքի բացում DN200 խողովակի համար | 100 հատ | 0.01 | 500.00 | 5.00 |
| 33 | h=12սմ հաստության խճի ենթաշերտ դիտահորերի տակ՝ անհրաժեշտ նյութերի արժեքով և մատակարարումով | մ3 | 1.62 | 7.00 | 11.34 |
| 35 | Պողպատե խողովակակտորի տեղադրում գոյություն ունեցող կոյուղու դիտահորի պատի մեջ DN400, L=0.3մ | մ | 0.3 | 15.00 | 4.50 |
| 37 | D1000 հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից դիտահորի համար հատակի սալ՝ КЦД-10 (1 հատի բետոնի ծախսը՝ 0.18մ³, մետաղի ծախսը՝ 14.4կգ.), արժեք, մատակարարում և մոնտաժ | մ3 | 1.08 | 50.00 | 54.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 38 | Բետոն M-200 | մ3 | 1.02 | 1.00 | 1.02 |
| 39 | Կոյուղու դիտահորի բետոնե առվակ B15 մակնիշի բետոնից՝ սվաղով և երկաթայնացումով | մ3 | 2.79 | 40.00 | 111.60 |
| 40 | Բետոն B15 | մ3 | 1.019 | 1.00 | 1.02 |
| 41 | Կոյուղու դիտահորերում պատի աճեցման համար B15 մակնիշի բետոն | մ3 | 0.7 | 40.00 | 28.00 |
| 42 | Ե/բ դիտահորի օղակ 1000мм բարձ,.0,89մ | մ | 1.5 | 50.00 | 75.00 |
| 43 | Ե/բ ծածկիսալ | մ3 | 0.19 | 50.00 | 9.50 |
| 44 | Բետոն B15 | մ3 | 0.41 | 40.00 | 16.40 |
| 45 | D1000 հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից դիտահորի համար պատի օղակներ КЦ10-9 (1 հատի բետոնի ծախսը՝ 0.24մ$^{3}$, մետաղի ծախսը՝ 8.2կգ.), արժեք, մատակարարում և տեղադրում | մ3 | 0.32 | 50.00 | 16.00 |
| 46 | Ե/բ դիտահորի օղակ 1000մմ բարձ,.0,89м | մ3 | 1.5 | 50.00 | 75.00 |
| 47 | Ե/բ ծածկիսալ | մ3 | 0.19 | 50.00 | 9.50 |
| 48 | Ամրան | տ | 0.016 | 500.00 | 8.00 |
| 49 | Թուջե մտոց d=560մմ | հատ | 6 | 25 | 150.00 |
| 50 | Բետոն B15 | մ3 | 0.41 | 50.00 | 20.50 |
| 51 | Մետաղական աստիճան՝ արժեքը, մատակարարումը, տեղադրումը և յուղաներկումը | տ | 0.04 | 500.00 | 20.00 |
| 52 | Ճանապարհային ծածկիսալ T տիպի թուջե մտոցով D1000 դիտահորերի համար □ արժեք, մատակարարում և տեղադրում | 100մ2 | 0.02 | 5000.00 | 100.00 |
| 53 | Դիտահորերում սեյսմակայունության մետաղական կապող էլեմենտներ. արժեքը, մատակարարումը և տեղադրումը | տ | 0.05 | 500.00 | 25.00 |
| 54 | OD 150, PVC խողովակի և պոմպային ագրեգատի ներծծման փողրակի միացման իրականացում համապատաս խանձևավոր մասերով (150/100) | հատ | 1 | 15.00 | 15.00 |
| 55 | Պողպատյա խողովակ Д 150մմ | մ | 0.4 | 7.00 | 2.80 |
| 56 | OD110 պոլիէթիլենե խողովակի և պոմպակայանի մղման փողրակի միացման իրականացում համապատաս խանձևավոր մասերով (DN 80/100) | հատ | 1 | 10.00 | 10.00 |
| 57 | Պողպատյա խողովակ Д80մմ | մ | 0.4 | 5.00 | 2.00 |
| | ***Ընդամենը*** | | Կշիռը % | **25.88** | **2147.58** |
| N 2 | **Պոմպակայան** | | | | |
| | **Բաժին-1. Յոր պոմպի տեղադրման համար** | | | | |
| 1 | 3-4 կարգի գրունտների մշակում բարձում և տեղափոխում 3կմ | 1000խմ | 0.008 | 500.00 | 4.00 |
| 2 | Խրամուղու մշակում V կարգի գրունտներում մեխանիզմով կողալիցքով | 1000խմ | 0.027 | 500.00 | 13.50 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Գրունտների վերջնամշակում ձեռքով | 100խմ | 0.023 | 500.00 | 11.50 |
| 4 | Գրունտի հետադարձ լիցք բուլդոզերով,տոփանումով | 1000խմ | 0.02 | 200.00 | 4.00 |
| 5 | Գրունտի հետլիցք ձեռքով | 100խմ | 0.017 | 200.00 | 3.40 |
| 6 | Բետոնե նախապատրաստական շերտ կառուցում B-7,5 | խմ | 0.8 | 40.00 | 32.00 |
| 7 | Բետոնե B-7,6 | խմ | 1.021 | 40.00 | 40.84 |
| 8 | Միաձույլ ե/բետոնյա հորի կառուցում: Հատակներ ,պատեր և ծածկեր B-20 բետոնից | խմ | 5.2 | 50.00 | 260.00 |
| 9 | Բետոնե B-20 | խմ | 1.02 | 50.00 | 51.00 |
| 10 | Ամրան A500c | կգ | 156.06 | 0.40 | 62.42 |
| 11 | Ամրան A240 | կգ | 25.9 | 0.40 | 10.36 |
| 12 | Դիտահորի մետաղական կափարիչ | տ | 0.129 | 500.00 | 64.50 |
| 13 | Պողպատյա Φ=108x3.5մմ խողովակների տեղադրում | մ | 2.5 | 4.00 | 10.00 |
| 14 | Ծխնի | հատ | 4 | 1.00 | 4.00 |
| 15 | Կողպեք | հատ | 1 | 3.00 | 3.00 |
| 16 | Մետաղական տարրերի ներկում | 100քմ | 0.15 | 30.00 | 4.50 |
| 17 | Յուղաներկ | կգ | 0.2 | 2.00 | 0.40 |
| 18 | Օլիֆ | կգ | 2.7 | 1.00 | 2.70 |
| | **Բաժին-2. Սանտեխնիկական մաս** | | | | |
| 1 | Պոլիէթիլենե անցում OD160/110 և Պոլիէթիլենե անցում OD110/90 | 10հատ | 0.2 | 20.00 | 4.00 |
| 2 | Փական չժանգոտվող պողպատից կոյուղու համար DN80мм | հատ | 1 | 15.00 | 15.00 |
| 3 | Փական չժանգոտվող պողպատից կոյուղու համար DN100мм | հատ | 1 | 25.00 | 25.00 |
| 4 | Փողակցաշուրթ չժանգոտվող պողպատե ազատ կցաշուրթով OD90/DN80 | հատ | 1 | 5.00 | 5.00 |
| 5 | Փողակցաշուրթ չժանգոտվող պողպատե ազատ կցաշուրթով OD110/DN100 | հատ | 1 | 7.00 | 7.00 |
| 6 | Արտաքին տեղադրման խոնավամեկուսիչ 800x600x250մմ մետաղական արկղի տեղադրում /պոմպի կառավարման արկղի համար/ | հատ | 1 | 15.00 | 15.00 |
| 7 | 32Ա միաֆազ ավտոմատ անջատիչի տեղադրում | հատ | 1 | 5.00 | 5.00 |
| 8 | Հաղորդալար Պղնձե, ПВ-3, 4մմ² x3 | 100մ | 0.15 | 100.00 | 15.00 |
| | **Բաժին-3. Սարքավորում** | | | | |
| 1 | Կոյուղու մղման ագրեգատի մատակարարում, տեղադրում և միացում համակարգին: Մղման ագրեգատը ներառում է<br>— Ղեկավարման վահանակ՝ էներգանկախ վթարային ազդանշանի սարքով,<br>— Մարտկոց,<br>— Տեղադրված պոմպերի քանակը՝ 2 հատ,<br>— Պոմպերի մղման նոմինալ բարձրությունը՝ H=2-5մ,<br>— Կուտակման ծավալը՝ 1 հատ՝ ոչ պակաս, քան 100լ, նյութը՝ պոլիմերային, | կտ | 1.00 | 3500.00 | 3500.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | — Աշխատանքային ռեժիմը՝ չխորասուզված,<br>— Պոմպի շարժիչի նյութը՝ չժանգոտվող պողպատ,<br>— Թիակի նյութը՝ չժանգոտվող պողպատ,<br>— Գաբարիտային չափերը՝ ոչ ավել, քան 800x900x1500(H).<br>— Միացումը էլ▯ցանցին՝ 1~230V, 50Hz,<br>— Շարժիչի իրանը՝ 1.4404<br>— Շարժիչի ամբողջական պաշտպանություն (բարձր լարումից, հակադարձ պտույտ և այլն),<br>— Մուտքի փողրակի տրամագիծը՝ DN 100,<br>— Ելքի փողրակի տրամագիծը՝ DN 80,<br>— Միացման դետալներ և մալուխներ: | | | | |
| | **Ընդամենը (Բաժին 1,2,3)** | | **Կշիռը %** | **50.28** | **4173.12** |
| N 3 | **Կոյուղու հոր** | | | | |
| 1 | 4 կարգի գրունտների մշակում բարձում և տեղափոխում 3կմ | 1000մ3 | 0.012 | 1500.00 | 18.00 |
| 2 | Խրամուղու մշակում V կարգի գրունտներում մեխանիզմով կողալիցքով | 1000մ3 | 0.039 | 500.00 | 19.50 |
| 3 | Գրունտների վերջնամշակում ձեռքով | 100մ3 | 0.03 | 300.00 | 9.00 |
| 4 | Գրունտի հետադարձ լիցք բուլդոզերով, տոփանումով | 1000մ3 | 0.036 | 200.00 | 7.20 |
| 5 | Գրունտի հետլիցք ձեռքով | 100մ3 | 0.03 | 500.00 | 15.00 |
| 6 | Բետոնե նախապատրաստական շերտ B-7,5 | մ3 | 0.8 | 40.00 | 32.00 |
| 7 | բետոն M-50 - 20-40մմ | մ3 | 1.021 | 50.00 | 51.05 |
| 8 | Միաձույլ ե/բետոնյա հորի կառուցում: Հատակներ, պատեր և ծածկեր B-20 բետոնից | մ3 | 7.95 | 50.00 | 397.50 |
| 9 | Տախտակ 3c 25-35մմ | մ3 | 0.207 | 180.00 | 37.26 |
| 10 | Տախտակ 3c 40մմ | մ3 | 0.16 | 180.00 | 28.80 |
| 11 | Բետոն B-20 բետոնից | մ3 | 1.02 | 50.00 | 51.00 |
| 12 | Ամրան A500c | կգ | 300.63 | 0.40 | 120.25 |
| 13 | Ամրան A240 | կգ | 35.5 | 0.40 | 14.20 |
| 14 | Հավաքովի ե/բետոնյա օղակների մոնտաժում ծածկի վրա | մ3 | 0.3 | 50.00 | 15.00 |
| 15 | Հավաքովի ե/բետոնյա տարր | մ3 | 1.00 | 50.00 | 50.17 |
| 16 | Շաղախ M-100 | մ3 | 0.018 | 50.00 | 0.92 |
| 17 | Թուջե մտոցի տեղադրում | հատ | 1 | 50.00 | 50.00 |
| 18 | Շաղախ M-100 | մ3 | 0.014 | 50.00 | 0.70 |
| 19 | Փայտյա կափարիչի տեղադրում | հատ | 1 | 10.00 | 10.00 |
| 20 | Հորի պատերի և հատակի սվաղում ցեմենտյա շաղախով 1:3 հեղուկ ապակիով | 100մ2 | 0.27 | 400.00 | 108.00 |
| 21 | Պատերի ջրամեկուսացում 2 շերտ բիտումե մածիկով | 100մ2 | 0.27 | 300.00 | 81.00 |
| 22 | Բիտումի մաստիկա հիդրոիզոլիացիայի համար | տ | 0.24 | 400.00 | 96.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 23 | Յարթեցուցիչ շերտ ցեմենտյա շաղախով ծածկի սալի վրա 20մմ | 100մ2 | 0.07 | 400.00 | 28.00 |
| 24 | Պողպատյա Փ=108x3.5մմ խողովակների տեղադրում | մ | 2.5 | 4.00 | 10.00 |
| 25 | Մետաղական տարրերի ներկում | 100մ2 | 0.05 | 200.00 | 10.00 |
| 26 | Յուղաներկ | կգ | 0.2 | 1.00 | 0.20 |
| 27 | Օլիֆ | կգ | 2.7 | 1.00 | 2.70 |
| | ***Ընդամենը*** | | Կշիռը % | 15.22 | 1263.45 |
| N 4 | **Մետաղական ցանկապատ** | | | | |
| 1 | Կանգնակների համար փոսորակների փորում մինչև 0,7м գրունտ 4 կարկ | 100խմ | 0.02 | 500.00 | 10.00 |
| 2 | Մետաղական դարպասի կառուցում | տ | 0.03 | 600.00 | 18.00 |
| 3 | Կանգնակ պողպատե 80x80x4մ | մ | 6.6 | 4.00 | 26.40 |
| 4 | Խողովակ պողպատե 50x50x4մմ | մ | 29.4 | 3.00 | 88.20 |
| 5 | Ձող պողպատե 12մմ | կգ | 48 | 0.50 | 24.00 |
| 6 | Ծխնի | հատ | 2 | 1.00 | 2.00 |
| 7 | Կողպեք | հատ | 1 | 3.00 | 3.00 |
| 8 | Մետաղական ցանկապատի իրականացում ցանցե բջիջներով | մ | 38.4 | 1.50 | 57.60 |
| 9 | Կանգնակների հիմքի բետոնացում | խմ | 2.15 | 26.22 | 56.36 |
| 10 | Կանգնակ պողպատե 50x50x3մմ | մ | 38.4 | 3.00 | 115.20 |
| 11 | Անկյունակ պողպատե 50x50x5մմ | մ | 76.8 | 3.00 | 230.40 |
| 12 | Գլոդվածք Al 8մմ | կգ | 15.38 | 1.15 | 17.66 |
| 13 | Պողպատե ցանց ռաբիցա 50x50, d=1.8մմ | քմ | 57.6 | 1.00 | 57.60 |
| 14 | Մետաղական տարրերի ներկում | 100մ2 | 0.57 | 10.00 | 5.70 |
| 15 | Յուղաներկ | կգ | 0.2 | 1.00 | 0.20 |
| 16 | Օլիֆ | կգ | 2.7 | 1.00 | 2.70 |
| | **Ընդամենը** | | **Կշիռը %** | **8.62** | **715.02** |
| | **Համընդհանուր** | | | **100.00%** | **8299.17** |
| | **ԱԱՀ** | **20%** | | | **1659.83** |
| | **Ընդամենը** | | | | **9959.00( ինը միլիոն ինը հարյուր հիսունինը հազար ՀՀ դրամ)** |

Կապալառուն աշխատանքները կատարում է Ք.Հրազդան, Վանատուր 487 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

**Հրազդանի համայնքապետարան**

**ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1,**

**վարչական շենք**

**Հրազդանի ՏԳԲ**

**Հ/Հ 900122001663**

**ՀՎՀՀ 03000453**

**Համայնքի ղեկավար՝**

-------------------Ա.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

<<ԱՆՆԱՐ>> ՍՊԸ

**ք.Հրազդան Կենտրոն թաղ.**

**Տիգրան-Մեծի 32**

<<Յունիբանկ>> ԲԲԸ Հրազդան մ/ճ

Հ/Հ 24127100346900

ՀՎՀՀ 03017559

<<ԱՆՆԱՐ>> ՍՊԸ տնօրեն՝

-------------------Ա. Խաչատրյան

*Հավելված թիվ 2*

*« 07 » ապրիլ 2021 թ. կնքված*

**<<ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-21/07>>** *ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

<< ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 5 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ»

ՀՈԱԿ-Ի ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ>> ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Հրազդան համայնքի «Թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-Ի ջրահեռացման համակարգի կառուցման>> աշխատանքների կատարման | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդող աշխատանքային օրվանից մինչև 30.07.2021թ. : | |
| 2 | | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ Կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում: | 30.07.2021թ. |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 9 959 000 | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան

ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ

Հ/Հ 900122001663

ՀՎՀՀ 03000453

Համայնքի ղեկավար

----------------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

<<ԱՆՆԱՐ>> ՍՊԸ

ք.Հրազդան Կենտրոն թաղ. Տիգրան-Մեծի 32

<<Յունիբանկ>> ԲԲԸ Հրազդան մ/ճ

Հ/Հ 24127100346900

ՀՎՀՀ 03017559

<<ԱՆՆԱՐ>> ՍՊԸ տնօրեն՝

-----------Ա. Խաչատրյան

«ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ- 21/07» ծածկագրով պայմանագրի

« 07 » ապրիլ 2021 թ. կնքված

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| N | (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | |
| | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231143 | << Հրազդան համայնքի «Թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ>> | 2 000 000 | 5 000 000 | 7 000 000 | 7 000 000 | 7 000 000 | 7 000 000 | 7 000 000 | 7 000 000 | 7 000 000 |
| | | | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս: | | | | | | | | |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հրազդանի համայնքապետարան | <<ԱՆՆԱՐ>> ՍՊԸ |
| ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք | ք.Հրազդան Կենտրոն թաղ. Տիգրան-Մեծի 32 |
| Հրազդանի ՏԳԲ | <<Յունիբանկ>> ԲԲԸ Հրազդան մ/ճ |
| Հ/Հ 900122001663 | Հ/Հ 24127100346900 |
| ՀՎՀՀ 03000453 | ՀՎՀՀ 03017559 |
| Համայնքի ղեկավար՝ | <<ԱՆՆԱՐ>> ՍՊԸ տնօրեն՝ |
| ----------------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | ----------------Ա. Խաչատրյան |